

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 7-9

ՅՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԿԹ. ՏԱՐԻ 1955

Կ Յ Ո Ւ Ր Գ Վ

Ս. ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

Կ Յ Ո Ւ Ր Գ Ի Թ.

ԱՒՐՀՆԵԱԼ ԱՅՆ ՈՐ ԶԷՆ ԻԻԻԲ ԿԱՐԱԻՏ. ՈՐ ԼՆՈՒՆ ԶԱՄԵՆԱՅՆ
ԿԱՐԱԻՏՈՒԹԻՒՆՍ ՄԵՐ

Յուրրաթու հաստատեաց զԱզամ, ի նմին եւ զանասունս
եւ զզազանս.

Ի նմին աւուր յորժամ եղեն, զիտացին եթէ զի՛նչ է կերակուր.
բաւական եղեւ խոտ անասնոց. եւ բանջար վայրի երէոց.

5 եւ մարդոյն չեղեւ բաւական գրախան երանութեան
զոր ետ նմա:

Եւ այսպէս ամենայն սողուն անարգէ գրանջար,
որ սպանանէ զնա.

Եւ ընտրէ զարաւտ, որ կեցուցանէ զնա.

10 Իսկ մարդ իմաստուն քան զամենայն փոխելացաւ քան զամենայն.
զի սողուն հոգայ զկենաց իւրոց. իսկ նա ընթացաւ
սպանանել զանձն իւր:

Որդիք Ազամայ նման են Ազամայ.

15 աւձք խարամանիք ծակոտեցին զնոսա,
որք ի վերայ հողոյ ոչ տրտնջեցին:

Մինչդեռ միտքան էին անասունք, մի ճարակ էր ամենեցուն.
Եղեն բաժինք ի միջի նոցա, փոխանակ զի ոխացան
նոքա ընդ միմեանս:

20 Առեւծ բանջար ուտէր եւ զայլ խոտ ճարակէր,
որպէս ուտէին ի տապանին զամն սղջոյն ջրհեղեղին.
Ոչ գառինս զայլոցն եմոյծ, եւ ոչ ոչխարս առեւծուցն.
զի յարդ եմոյծ անասնոցն եւ խոտ վայրի երէոցն.

ԻԹ. B, 29ա: E 66ա: D էջ 64:
Խորագիր՝ D է սյն:
13 D նմանք: — 17 D միտքանք: — 20 ED առեւծ: — 22 ստ [B 27ա. E 65ա.
D էջ 65] իւծուցն: Թուղք մը տեղափոխուած եւ վերէն վար առ ի շեղ լուսանցքին հետ կիսով
պատռուած եւ կորուած: Շղագիրները ենթադրաբար լրացումներ են:

25 Ի տապանին տրանջեցին... յարդ եւ խոտ եւ ոչ խակ
 զ..... բաւեցին.
 Իրրու ճաշակ... խոտ դալար, որպէս զի յաւ...
 Մի սեր էր անասնոց եւ մի բնութիւն ամենեցուն.
 նոյնպէս եւ յաւուր յորում եղեն՝
 30 քանզի չէին յիսացեալ ընդ միմեանս,
 վասն որոց ոչ ճարակաւ եւ ոչ տեղեաւ
 աւտար էին նոքա ի միմեանց.
 այլ յորմէ հետէ բաժանեցաւ մարդ ի ձեռն պողոյն յԱստուծոյ,
 բաժանեցան եւ նոքա յայնմանէ, որ եղեւ ի պատկերն Աստուծոյ:
 35 Կորեաւ դրախտն երանութեան. եւ նոքա կորուսին
 զարաւտն իւրեանց.
 նա եկն ի խոտ եւ նոքա պահեցան ճարակել զփուշս
 ... արութեան.
 եկն ամենայն ի պատճառս զլիտյն, ամենայն եկն ի խոտ անիծեալ:
 Ամենայն եկն ուտել զնա. զագանք ցանկացան զիսկանց:
 40 եւ..... ուիր յարաց (°) անասնոց ուտել փուշ եւ աւճի
 հող..... եալ.
 քանզի յիսացան ընդ միմեանս եւ աւտարացան նոքա ի միմեանց.
 անասնոց սրբոց... տացան խոտ եւ պղծոցն մարմին մարդոց:
 Շփոթեցաւ ամենայն ինչ ի ձեռն իշխանին ամենայնի.
 45 Հաստատեաց զնա ի կազմած ամենայնի.
 ի տեառնէ չէն եւ ամենայն իմաստութիւն եղեւ ամենայն |||| 3

Կ Յ Ո Ւ Ր Դ Լ.

. ունէին:
 Եղիշա գհարիւր մարգարէս կերակրեաց սակաւ հացիւ.
 կերան քաղցեալքն եւ նշխարեցին ուստի ոչ ակն ունէին.
 եւ բեր պատանի մօլաթուղ սպանող յանուն կերակրոյ.
 5 խափանեցաւ մահ ալերր եւ կերան, ուստի ակն ոչ ունէին:
 Անկաւ ի գուր Երեմիա. եւ անփոյթ արար զնմանէ
 ժողովուրդն իւր.
 բարեխաւսեաց զնմանէ Քուշացին,
 եւ ել ի ձեռն այնր, զորմէ ոչ կարծէր.
 10 պակասեաց զինի ի հարսանիս,
 եւ զի մի լինիցի ծաղր փեսայն,


27 DE սէր: — 29 E սե...: — 37 D արութիւն: — 42 D սուրբ անասնոցն խոտա-
 ցաւ: — 45 D իմաստութեամբ: Բնդմէջ B 27. եւ 28 բուղբերու բուղբ մ'ինկած:
 Լ. B 31ա: E 67բ-68ա: D 49 68-69:
 1 Բնդմէջ 30-31 բուղբերու բուղբ մը ինկած, անոր հետ կցուրդիս խորագիրն եւ
 սկիզբը: — 2 DE եղիշայ: — 4 E սպանող: — 6 E երեմիայ: — 7 D ժողովուրդ: —

փոխեաց Տէրն մեր զՉուրն ի գինի,
 զոր ոչ ակն ունէին:
 15 Քաղցեցան հազարք մարդկան յանապատին
 երկիցս անգամ.
 եւ շեղջեաց նոցա ձուկն եւ հաց,
 ուստի ոչ ակն ունէին.
 20 զՉակքէ յափշտակիչ այլոց
 յաւժարեցոյց բաշխել զստացուածս իւր.
 հանդերձեցան աղքատք եւ տնանկք,
 ուստի ոչ ակն ունէին:
 Ի նաւէն իրրու քաղցեալ էին, ելին աշակերաքն,
 եւ զտին հաց եւ ձուկն ի վերայ կայծականց,
 ուստի ոչ ակն ունէին:

Կ Յ Ո Ւ Ր Դ ԼԱ.

ԱԻՐՀՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԲԱՐԵՐԱՐԻ, ՈՐ ԿԵՐԱԿՐԵԱՑ ԶԱՐԱՐԱԾՍ ԻՒՐ
 Արրահամ սիրիչ աղքատաց, այն որ հրեշտակք իջին առ նա.
 Ընթացաւ նա ընդ առաջ աղքատաց,
 եւ ետես ի նոսա այլակերպութիւն:
 Առ դուռն վրանի իւրոյ նստէր ի տալթաժամու,
 5 որպէս եւ գրեալ է.
 եւ իրրեւ զարմացեալ էր ընդ յայտնութիւնն
 զոր տեսին ի նմին ժամու,
 յայտնութիւնն, զոր ետ ընդ ետ եղ առաջնոյն.
 եղեւ նմա ի դէմս աղքատաց:
 10 Ընթացաւ ընդունել զաւտարս,
 եւ պահեցին նմա հրեշտակք
 կարծեալ թէ մարդիկ իցեն,
 շուք որ ի վերայ միոյն թոյլ տայր խորհել
 թէ զուարթունք իցեն,
 15 տեսին ամենեցուն չէր հաւասար,
 զի փառաւորութիւն որ ի վերայ միոյն,
 մեծ էր քան զփառս երկոցունցն:
 Շուք երկոցունցն չափով էր եւ երրորդին առանց չափոյ:
 Եւ զի ետես Արրահամ, թէ եւ նոքա որք եկին ընդ նմա,
 20 խորհէին ի նմանէ.

12 DE տէր: — 16 D չուկի նոցա:
 ԼԱ. B 31բ: E 68ա-69ա: D 49 71-75:
 Խորագիր՝ D զարարած:
 2 նա] եւ: — 5 D չուկի եւ: — 8 D յայտնութիւն:



ուղղեաց զհայցուածս իւր առ մինն անդր,
 զի եղեն նմա երկուցն եւս աւրինակք:
 Արդարն սկսաւ խնդրել ի միոյ անտի, իբրեւ յԱստուծոյ.
 Մի զանց առներ զտամբ ծառայի քո:
 25 Տաւթն ոչ արդել զԱրրահամ ընթանալ յանդեայն
 ստիւք իւրովք.
 Եւ զՍառա հաղորդեաց ընդ իւր, զի արասցէ
 երխս գրիւս բաղարջ.
 Ետուն գրոհ տունն Արրահամու, զի տեսցեն զիջանել զուարթնոցն.
 30 քանի հայէին տեսանել՝ քաղցնուին աչք նոցա զչուքն.
 այն աւր էր ուրախութեան մեծի ծառայից եւ ազատաց եւ տերանց.
 որք ընդ աղքատացն ուրախ լինէին,
 ընդ զուարթնոցն քանի՛ եւս արդեւք:
 Ժողովեալ էին ծառայքն առ Արրահամ
 35 եւ ազախնայքն առ Սարրա.
 խափանեցին զամենայն իրոս, զի հայեացին ի նոր տեսիլն.
 զոտս նոցա լուաց ձեռաւք իւրովք.
 Եւ զծառայս իւր ոչ արար հուպ.
 Հայս եփեաց Սառա եւ ոչ հպեաց զազախնեայս իւր.
 40 եւ զզուարթունս պատուականս քան զամենայն,
 ինքն անձամբ իւրով պատուեաց.
 ա՛ռ կողի եւ կաթն եւ զորթն հանդերձ հացիւն,
 եւ եզ առաջի.
 ոչ նստաւ առաջի նոցա, այլ յտան եկաց եւ պաշտեաց զնոսս.
 45 յազեալք լցուցին զքաղցութիւն,
 զոր զգեցան ի վայրկենի միոջ.
 եւ մխրթարեցին զՍառա, զի առցէ որդի,
 որում քաղցեալ էր ի վաղէ:
 Ասէ ցնա. ի սոյն ժամանակի եղիցի քեզ որդի ի Սառայէ:
 50 Լուաւ Սառա եւ բաժանեցան միտք իւր ի խոստմանէն.
 Աճումն զիա՞րդ լինիցի ինձ, զի ճանապարհ կենացն անց զինեւ.
 ոչ միայն ես առանցեալ եմ, այլ եւ տէր իմ Արրահամ ծերացեալ է:
 Անզաւակն ոչ խնդրեաց նշան ի նմանէ. եւ ինքեամբ ետ նմա նշան.
 զի զուչակեաց զծածկեալսն,
 55 զոր նիւթեաց ի ներքոյ խորհուրդ նորա:
 Ապա յանդիմանեաց զծաղր նորա առաջի բազմաց.
 եւ նա ժխտեաց թէ՛ Ոչ ծիծաղեցայ.
 յանդիմանեալ լինէր ծածուկ ծաղումն.
 եւ ժխտէր վասն արտաքնոյն.

21 D մին: — 22 D երկուքն: — 32 ED արդեալք: — 39 E սառայ: — 45 E զքաղցրութիւն:
 — 47 DE զսառայ: — 50 սառայ: — 58 D ծաղուն. եմամ. ծիծաղ, ծիծաղումն:

60 պատուհասէր զխորհուրդս նորա.
 զի ծիծաղեցաւ յորովայնի իւրում.
 եւ ժխտէր բերան ընդ շնչոյ.
 թէ՛ ոչ ել ծաղր ընդ շրթունս նորա:
 Սառայէր պատուհաս պատուհասչին.
 65 եւ բերանն բարիօք ժխտէր.
 եւ Արրահամ որ կայր առ նմա,
 վկայեաց թէ՛ ոչ շարժեցան շրթունք նորա.
 հիացաւ Արրահամ եւ երկեաւ
 տալ պատասխանի ընդ Սառայի,
 70 զի թէ՛ պէ՛տ եւ ոչ ծիծաղեցաւ,
 զիտէր թէ՛ ի միտս իւր ծիծաղեցաւ:
 Աւրհնեալ է որ ուրախ արար զԱրրահամ,
 ի ձեռն պաղոյ որ ի Սառայէ ամբոյ,
 Որ եղեւ յազգ բաղում,
 75 յորմէ՛ ծաղեաց արքայն Քրիստոս:

Կ Յ Ո Ւ Ր Գ Լ Ք.

ԱՒՐՀՆԵԱԼ Է ՈՐ Ի ՁԵՌՆ ՍԻՐԵԼԻՈՅ ԻԻՐՈՅ ԿԵՐԱԿՐԷ ԶԱՇԵԱՐՀ
 ԼՐԻԻ ԻԻՐՈՎ

Առաքեցան զուարթունք ի տուն Արրահամու
 ցնծացողի ընդ առաջ կարուտերոց.
 զի տացեն նմա ի ծերութեան իւրում որդի,
 զոր խնդրեացն ի մանկութեան իւրում.
 5 յեա ծերութեան Արրահամու եւ մաշկոյ Սառայի կնոջ նորա,
 խոստացան տալ հարիւրամենին որդի.
 յայտնեցին եւ Սառայի, թէ՛ ի սո՛յն աւուրս եղիցի որդի Սառայի:
 Ծիծաղեցաւ Սառա. զի երկեաւ՝ ժխտեաց իբրեւ յանդիմանեցաւ.
 սուտ համարեցաւ ստութիւնն,
 10 զրողն զայն՝ խայտառակիչ ստոց.
 ստութեամբ զստութիւնն իւր կամեցաւ ծածկել, զի երկեաւ:
 Զուարթունք այն հոգեղէնք ընտանեցան ընդ կերակուրս.
 զի զնմանութիւն մարդկան զգեցան, զկերակուր մարդկան կերան,
 եւ զԱրրահամ զողումն կալաւ. ի միտ առ եթէ՛ Տէր զուարթնոցն
 15 ընդ զուարթունս խոնարհեցաւ.
 նստաւ առ սեղան նորա.
 սիրտ իւր պարկեշտ, եւ գոյն իւր հատեալ:

ԼՔ. B 34r: E 69r-70a: D էջ 75-78:
 Խորագիր՝ D չունի է. DE սիրելոյ:
 1 D զուարթունքն... կարտեւոյ: — 7 D սառայ: — 8 E սառայ: D չունի ծիծաղեցաւ
 սառայ: — 10 D զրողն: — 11 D զստութիւն:

ի ժամուն իրրեւ մերձեցաւ լուանալ զոտս Տեառն իւրոյ,
 որ վաստակեցան եւ եկին առ նա:
 20 Երբարձ զորթն ուսովքն, զորմէ ասաց թէ Մերացաւ տէր իմ.
 Թէպէտ եւ մարմնով ծերունի էր, այլ սիրով պատանի էր:
 Իբրեւ հանգուցին զԱբրահամ առնելով զամենայն, զոր խնդրեաց,
 ետուն վարձ վաստակոց նորա,
 զի եղիցի որդի կարաւտութեան նորա.
 25 Որ հաւատացեալ էր իրրեւ զԱբրահամ, ասէր թէ դիւրին է այս.
 Եւ որ երկմիտ՝ կարծէր թէ չէ մարթ լինել այսմիկ:
 Զկնի աւուրն յղացաւ Սառա, իբրեւ չէր զգացեալ զնա.
 զի ոչ եղեւ յորովայն իւր այլակերպումն,
 եղեւ յերեսս իւր այլափոխումն.
 30 աչք իւր լուսաւորեցան. ի ծերութենէ աւտարացաւ
 ի սակաւ ժամանակն.
 Եւ վկայէ Աբրահմէք արքայ, զի առնուլ զնա կին կամեցաւ:
 Սառա թէ ծերացեալ էր, որպէս ասացն,
 ոչ զանցանելով զամենայնիւ
 35 պառաւուն ցանկա՞յր թագաւոր այլազգեացն:
 Մինչ կամէր Սառա գիտել զծածուկ յղութիւն որովայնի իւրոյ,
 գեղն զոր ստացաւ՝ երեսք իւր վկայեաց զյղութենէ միջոց նորա:
 Պառու որովայնի նորա ծածկէր. գեղ երեսաց նորա ոչ կարէր.
 40 Կամեցան քահանայքն ոչ զի տեսցեն զսերունն որ եղեւ
 ամլութեանն.
 այլ զի տեսցեն զծերութիւնն, որ դարձաւ ի մանկութիւն:
 Ընթերցարուք, եղբարք, զինչ արար աղքատսիրութիւն
 Ընդ Աբրահամ.
 45 զի արժանի եղեւ զուարթնոցն եւ աւրհնեցաւ ի մէջ ամուլ
 ամուսնոյ իւրում.
 Մեծ էր նա հաւատովք եւ կատարեալ յամենայն պատուիրանս.
 Եւ ծնունդ Սառայի ոչինչ ետ, այլ աղքատսիրութիւնն.
 հանդոյն լերուք, որ գտուրս տայք, եւ նմանեցէք մաւր
 50 մերում Սառայի.
 Ստացարուք իրրեւ զնա ժուժկալութիւն,
 զի միսիթարեսջիք երազ նման նորա:
 Աւրհնեալ այն որ ոչ զլանայ զվարձս ջրոյ որպէս երդուաւ.
 Եւ զի ամենայն իւրիք ուրախ եղեաք,
 55 ուրախ լիջիք առ սեղան նորա:

20 D ուսովք... ասացն. քերես ուղղելի գուսովքն: — 27 ED սառայ: — 35 D պառաւուն
 E պարաւուն: — 38 D իւրոյ: — 40 E սէրունն: — 41 D չունի զի: D մանկութիւնն:

Կ Յ Ո Ւ Ր Դ Լ Գ.

Ի ՔԱՂՅԵԼՈՅ ՈՐ ԼՅԱՆ ԵՒ ՆՇԵԱՐԵՑԻՆ, ՔԵԶ ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ,
 ՏԵՐ ԿԵՐԱԿՐԻԶ

Մի եղիցուք աւրինակ յոռի բարեբուց եւ չարահաւաց.
 բարեբուցն խորչել ի մէնջ, եւ չարացն նմանել մեզ.
 Ըստ քաղցի մերում կերիցուք, եւ յաւելորդն մի մերձեցուք.
 Եւ յոյժ գինւոյ մի ցանկացուք:
 5 Ուխտաւորք ժողովրդեանն,
 իբրու նմանութիւն է ուխտաւորաց մերոց,
 հատուցեալք եղեն ի գինւոյ եւ աւտարացան բնաւին յորթոյ,
 Սուրբ մարդոց եւ կուսանաց քանի՜ տգեղ է,
 զի հարկանիցի հոս գինւոյն ի բերանոց նոցա,
 10 կամ գոյն գինւոյ յերեսս նոցա:
 Յանկութեանց սրտի յաղթեցաք.
 Կանկութիւն գինւոյ մի յաղթեցէ մեզ.
 Եւ զի ամենայն իմիք ցանկայ մարմին,
 յաղթութիւն աւրէն է առնուլ:
 15 Ժողովրդեանն որ յանապատին էին, առողջքն ի սովոյ բեկեալ էին.
 Եւ հիւանդք եւ ախտաժէտք նոցին ի նեղութեան ծիւրեալ էին:
 Որդի արարչին ամենայնի ոչ միսիթարեաց ի ձեռն գինւոյ
 զքաղցեալս եւ զհիւանդս նոցա:
 Հացն զոր բազմացոյց՝ հալածեաց զքաղցն որ ի մէջ սովելոցն.
 20 Եւ առողջութեամբ նորա սպառեցաւ հիւանդութիւն
 հիւանդաց նոցա.
 զքաղցեալսն հացիւ ուրախ արար եւ զախտաժէտն
 առողջութեամբ:
 Փոխանակ գինւոյ հաց յաճախեաց,
 25 եւ փոխանակ ցբոյ առողջութիւն.
 արդ զի ունիմք զառողջութիւնն, մի մերձեցուք առ գինի,
 որ բնակեցուցանէ զողորջ յառողջս,
 որ հանապազ ըմպեն զնա, զի մի աստանդեցէ զմիտս նոցա:
 Եւ զի աշխարհականք զգուշանան ի նմանէ,
 30 ո՞րչափ եւս առաւել սուրբք.
 զի երկրաւորք հիւթացան ի նմանէ, փախիցին ի նմանէ երկնաւորք.
 այն որ յաճախեաց զհացն յանապատին,
 կարէր նա հաստատել զգինի.
 արար նա զպիտոյն եւ եթող զայն որ չէրն կարի պիտոյ:
 35 Յաւել եւս եւ յաճախեաց հաց, եւ շեղջեաց ձուկն կարաւտելոց.

ԼԳ. B 36r: E 70a—71a: D 78—81:
 1, 2 ED բարեբուց: — 4, 7, 10, 11 E գինւոյ: — 9 E ի բերանոց (D բերանոց) նորա:
 31 B հիւթացան. E Պետրոսեան կ'առաջարկէ կարգալ հեռացան:

զբաղցութիւնն հացիւ ելից, եւ զծարաւն ջրով անցոյց. եւ զկնի կենդանանալոյն հաստատեաց հուր եւ հաց եւ ձուկն, այն որ հաստատեաց զայստսիկ անգ,

ոչ կամեցաւ հաստատել զգինի:

40 Ի մէջ Կանայ զի հաստատեաց զգինի, ծանաւթք էին Մարեմայ, եւ ոչ վայել էր եթէ հարազատք մաւր Տեառն մերոյ կարաւտացին, զի մի լինիցի մայր նորա ծաղր, եւ ազգն ամենայն ի կորանս. ի ձեռն գինւոյն անուանի արար գոռհմն կարաւա եւ ազբատ:

Մինչեւ եկեալ էր տեառն մերոյ՝ զինի ի փոխ առնուլ կամէին. 45 եւ իրրեւ եկն անդր աէր մեր, բաշխեցին զինի ընդ ամենայն Կանայ. արամութիւն որ նախ քան զգալ նորա, մերժեցաւ յետ զալոյ նորա. կարաւտութիւնն ետես զԱստուած ի տուն փեսային եւ սրացաւ ե՛լ: Աւրհնեալ Հայր եւ Որդի եւ Հոգի սուրբ ի քաղցելոց,

50 որ կերան եւ նշխարեցին:

Կ Յ Ո Ւ Ր Դ Լ Դ.

ՔԵԶ ԱԻՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՏԻԵԶԵՐԱՅ, ԿԵՐԱԿՐԻՉ ԱՇԽԱՐՀԻ ԳԹՈՒԹԵԱՄԲ ՔՈՎ

25 Աւրէն զրանալ սրաի զխրախութիւն, զոր ետես աին. եւ ոչ ի բերանոյ աժգոհ լինել զայնմանէ, զոր ճաշակեցին քիմք. զի աշխատութեամբ ժողովեցան եւ վաստակով եւս կազմեցան.

5 2ի որչափ աւրէն է տալ նմա, այս յոյժ մեծ է քան զմեզ. զչափ կարի մերում տացուք նմա, եւ աւելի համարի զայն. եւ զուարթունք որք բնակաւորք են,

ոչ բաւեն հատուցանել զպարտս իւրեանց. զի հրեշտակք պարտեցան յայսմանէ,

10 քանի՞ եւս արդեւք հողեղէնքս:

2լացաւ զնա ժողովուրդն յանապատին, որ տրանջեաց ի վերայ մանանային. մեք տացուք աւրհնութիւն, զի ի մէջ շինի կերակրեաց զմեզ.

15 ո՞ կարէ հատուցանել, եղբարք, ընդ արարածի եւ կազմածոյ մերում.

եւ եթէ այս եւս հատուցանիցի, ընդ խաշելութեանն ո՞ հատուցանիցէ:

2ի չեմք յաղթողք պարութեան այսոցիկ, ոչ պահանջեաց ի մէնջ պահս խիտս.

41 D վայելէր: ԼԳ. B 38r: E 71r: D 82-84: 9 E արդեւք (D արդեւք): Լ D հողեղէնք: — 13 մերում այսպէս փոխ. մերոյ: — 18 D յաղթող:

20 իրրու տայր զվաթանապատիկս, աւրհնութիւն խնդրեաց ի մէնջ, որ զիւրին է բարձանց եւ խոնարհաց, արդարոց եւ մեղաւորաց, առողջաց եւ հիւանդաց:

Ի բանից ոչ յազի մարզ եւ յաւրհնութենէ ձանձրանայ. զսրովիաւսք ոչ հատանին եւ յաղաւթս վհատութիւն է մեզ.

25 որով արգահատեցէ այնմիկ որ արդելու գրեբան իւր յաւրհնութենէ.

խաւսք մեր որ ընդ մարդկան են՝ յարզի եղեն մեզ քան զԱստուած. տացուք փառս Աստուծոյ ընդ ամենայնի, զոր ետ Աստուած.

զի ետ մեզ արդեամբք խորտիկս,

30 տացուք աւրհնութիւն բարբառովք. զի առանց վաստակոց է արարչութիւն նորա,

եւ առանց աշխատութեան աւրհնութիւն մեր:

Ի ձեռն բանի հաստատեաց զմեզ, բանիւք հաստատեցուք զգովութիւնն.

35 զի մոզ արանջէ եւ ուտէ, հեթանոսն ուտէ եւ ըմպէ. ընդ նոցա եւ ընդ մեր հատուցուք աւրհնութեամբ,

որ երանէ ընդ բերան մեր. զի Մարկիոն զլացաւ զկերակրիչն իւր, եւ Մանի զստեղծիչն իւր.

եղեն ամուլք յաւրհնութենէ. զի Բարդեւծան զլացաւ զՀայր եւ Հրեայք զՈրդի աւժեալ:

40 Յաճախեցէ ի բերան մեր զոհուիլիւն. եւ ելցէ ի սուրբ սրտէ մերմէ աւրհնութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Կ Յ Ո Ւ Ր Դ Լ Ե.

Ի ՔԱՂՅԵԼՈՅ ԵՒ ՅԱԳԵԼՈՅ ՔԵԶ ԱԻՐՀՆՈՒԹԻՒՆ, ՏԵՐ ԿԵՐԱԿՐԻՉ

Տաց խրատ բարի որ լսէ ինձ, զի ի բարի խրատունն աւգտեցուք ամենեքեան.

զի չէ հնար եթէ ոչ կերիցուք, զի քաղցն բեակեալ է ի մեզ բնութեամբ.

5 բայց եթէ ե՞րբ եւ քանի՞ կերիցէ, չեն այսոքիկ բնութեամբ. եթէ ոչ ոք արբցէ, չէ հնար. եւ սահման այսմիկ չէ եղեալ:

Բայց եթէ զի՞նչ եւ քանի՞ արբցէ, կամաց են այսոքիկ երկոքեան. ոչ զի մի՞ ոք կերիցէ ասացի, այլ զի արժանի կերիցէ.

10 եւ ոչ զգինի արդելում ես, այլ աղաչեմ զի չափով արբցէ. ի նոյ արդար եթէ հայեցուք, խիթայ սիրա մեր ի գինւոյ:

22 D ասողոց: — 24 ED զորով խաւսք: — 25 D ո՛վ: — 27 D ետ մեզ: — 30 D վաստակոյ: ԼԵ. B 40r: E 71r: D 84-88: Խորագիր՝ B ի քաղցել: D քաղցեալ յազ: — 10, 18, 32, 36 E գինւոյ: — 11 B 1 E խրատուն D խրատու. ուղղեցի խրատունն: —

Որ զծաղր առակեաց ի մեզ, զիա՞րդ լուսցէ.
այր արդար եւ ցածուն էր նա
 Ի դարն շուայլեալ եւ անաւրինեալ.
յաղթեաց հազարաց դստերացն Կայենի.
 Եւ ափով գինի յաղթեաց նմա.
15 եղեւ ընդ երկար ընդ դստերան Կայենի
 Եւ բնակեաց զամ մի ընդ անասունս:
Եւ նա որ յաղթեաց ի ներքս եւ արտաքս՝
 պարտեցաւ ի գինւոյ.
20 փոխեցան յանէծս ամենայն աւրհնութիւնք իւր.
 զի անէծ զորդի իւր.
 Եւ ոչ կամեցաւ, եւ արար զնա
 ծառայ ծառայից ստուգութեանն.
անէծ բերան նորա զորդին կրտսեր զոր սիրէր նա զՔամ,
25 եւ զՔանան մանուկ, որ վշտացոյց զնա ի մերկումն իւր:
Նայեաց եւ ի Սահակ. ո՞րչափ վշտացաւ ի ժամու
 զի աւրհնեաց զորդի իւր.
 Եւ իրբեւ Յակոբո՞ւ էին աւրհնութիւնքն,
 վշտիւ արգել զնոսա յեսաւայ.
30 յանիծանելն Նոյի զՔանան ի սուգ մեծ էին միտք նորա.
 զի ոչ եթէ ցամամբ անիծանէր, այլ ստուգութեամբ հատանէր:
 Ոչ եթէ յուժգին գինւոյ մերկացաւ ստոյգն եւ արդարն,
 զի եթէ արբեալ էր յայպան, զնորա զհետ երթայր պատուհան.
ստուգութիւնն ոչ ա՛ւ ակն երեսաց Քանանու.
35 զիա՞րդ առնէր զնոյ գատաւոր մեղացն զոր ինքն արար:
 Եթէ գինւոյն յաղթեալ էր նմա, մի հրաման ելանէր
 ի վերայ այնր որ մերկացան եւ այնր որ ոչն ծածկեաց.
 անէծ նովաւ զթշնամանիչն, եւ աւրհնեաց նովաւ զպատուիչն իւր.
աղբիւր որոշմանց արար զնա, շարութեանց եւ բարութեանց:
40 Ի ժամու աւրհնութեան հանգուցեալ էր,
 Եւ արամեալ ի ժամ անիծից.
 Եւ ինքն Քամ վշտարար նմա, զի տարազիր եղեւ յաւրհնութեանցն.
 գինի առակեաց զցածութիւն ծանունն,
 զի արբ գինի եւ յաղթահարեաց զմիտս ծերոյն:
45 Եւ եթէ նա զի աւրհնութեամբ արբ գինի սակաւ եւ չափով,
 Եւ զարձան յանէծս աւրհնութիւնք իւր,
 Եւ խոստացաւ ազատաց ծառայութիւն,

զձանր Է (Պետրոսեան) կ'ուզի զծաղր: — 12 D այր ցածուն եւ արդար: — 25 ED Իսահակ:
E չունի զի: — 29 ED Յակովբոս... զնոսայ (D զնոսա է) Սառայ. ուզիցի զնոսա յեսաւայ:
— 46 ED զարձաւ:

քանի՞ եւս երկիցէ տկարութիւն մեր ի գինւոյ,
 զի դուցէ մեղիցէ մեզ.
50 Ի բժշկութիւն եւեթ արբցուք, զի յայս իսկ տուեալ է գինի:
Որ ցաւեցան ըստ նմանութեան Տիմոթէի՝
 այնպիսեացն ետ զնա Առաքեալ,
 բժշկել նովաւ զցաւս իւրեանց.
55 որ ըմպէ զնա վասն ցաւոց,
 գոհասցի զբարւոյն որ ետ զնա մեզ.
 Եւ առողջ որ վարի նովաւ, գոհութեամբ եւ չափով արբցէ:
 Աւրհնութիւն Որդւոյ որ արար զնա միսիթար ամենայն
 արամեցելոց.
60 Եւ գոհութիւն նմա, զի արար զնա մեզ զարմանիչ ցաւոց մերոց:

Հրտ. 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

**ՄՈՎՍԷՍ ԳԵՍԵՈՒՐԵՆՅԻ (ԿՈՉՈՒՐԸԺ
ԳԸՂԱՆԿԱՏՈՒՐԸՅԻ) ԵՒ ԻՐ ՊԵՏ-
ՄՈՒԹԻՒՆՆ ԸՂՈՒՐԵՆԻՑ**

(Շարունակութիւն):

10. ՋՈՒԱՆՇԻՐ, ՎԱՐԱԶ-ՏՐԿԱՏ, ՏԵՐ ԻՍՐԱՅԷԼ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ազուանից Պատմութեան մէջ ընդարձակ
գլուխներ նուիրուած են Ջուանէր եւ վա-
րագ-Տրդատ իշխաններու եւ Իսրայէլ եպիս-
կոպոսի: Այս գլուխները մէկ գրչի ար-
տագրութիւններն են: Անոնք բովանդակու-
թեամբ պատմական եւ սրբախօսական վի-
պասանութեան փորձեր են, նկարագրով՝
ճարտասանական կրթութիւններ:

Անանուն հեղինակը ունեցած է իր գրա-
դարանին մէջ Փաւստոսն, Կորինը, Ագա-
թանգեղոսը, Ղ. Փարպեցին, Եղիշէն, Սե-
թանգեղոսը, Մ. Խորենացին, Թոմաս Արծրունին
րիոսը, Մ. Խորենացին, Թոմաս Արծրունին (930) եւ
Յովհաննէս Դրասխանակերտցին (930) եւ
Յովհաննէս Դրասխանակերտցին: Այս
կան-հայրապետական գրութիւններ: Այս
գրուածքներէն ծաղկաքաղած է ոչ միայն
պատմական տեղեկութիւններ, այլ եւ բա-
ռեր եւ ճարտասանական ստուգութիւններ:
Ի բերան ուսած կ'երեւայ Կորինն եւ Ագա-
թանգեղոսը: Չարմանալի չէ այնուհետեւ,

եթէ հեղինակիս «ծաղկաքաղ վարդապե-
տութիւնն եւ քաղցրուտոյց խրատները»,
«ախորժարար» լսելի եղած են ունկնդիրնե-
րուն (Բ. 41):

Վիպագիրը հայրենասէր ազուան մըն է,
ոչ ազատ կուսակցական ձգտումներէ եւ ազ-
գամոյթիւնէ: Ան նկրտած է ստեղծելու ի
պարձ անս իր ժողովուրդին պանծալի հերոս-
ներ, քաջարի սպարապետներ, խոհեմազարդ
քաղաքագէտներ, ամենապայծառ զէմքեր,
աստուածատէս առաքեալներ: Ան կը բուսցնէ
աստուածատէս առաքեալներ: Ան կը բուսցնէ
հայրենի հողէն կենսատու թառեր, սրբոց
մատուցներ, բարեգարգելու Ազուանից վան-
քերը, ուխտատեղիի վերածելու Ազուանից
աշխարհը: Աշխարհ մը, ուր հիմնուած է
հիւսիսային կողմանց նախկեղեցին, առա-
քելական աջով, ուր զարգացած է անկախ
նուիրապետութիւն, որ ընդարձակած է իր
աստուածները մինչեւ Հոնաց աշխարհը թա-
սանցանց. աշխարհ մը, որ եւ քաջութեամբ
եւ փառօք, եւ նուիրապետական իշխանու-
թեամբ եւ սրբութիւններու ստատութեամբ
ի վեր է քան Հայոց աշխարհն եւ Եկեղեցին:
Ան պրկած է իր գրչի ազեղը նպատակակէտ
ընտրած երկինքի ստեղծելը:

Թէ Ազուանից Պատմութեան Ա. 27—30,
Բ. 29—33 եւ Բ. 17—28, 29—31 եւ 33—45
մէկ գրչի գործ են, ուշագիւր եղած էր ար-
դէն Ն. Ազունց (Անահիտ, 10, Թ. 3, էջ 77):

54 E չունի որ: — 59 D չունի մեզ: